

Հրաբոս-Դվ. կը կոչուին , և իրենց բացուածքները՝ խոռոշաբան : Օրինակի հահար , Խոտալից մէջ Վեսուվ լեռը , որոյ լիտուներկու արտահոսումն , այսինքն լիտուներկու անդամ կրակ ցայտեցրնելը , ծանօթ է , թերեւս հին ատենաներն ուրիշ արտահոսումներ ալ ունեցած ըլլայ , որոնք անծանօթ են մեզ : Մեզ ծանօթ եղած այս արտահոսմանց առաջինը՝ Քրիստոսի եօթանասունը ինը թուականին տեղի ունեցած է . ուրեմն հազար ութը հարիւր տարի կայ որ այս հրաբուղինը շատ մը քաղաքներ կործանած է . իւր վերջին արտահոսումը՝ յետին ժամանակներս տեղի ունեցաւ , որոյ վրայ հաւանօրէն խօսուի լը լսած էք : 1872 Ապրիլ ամսոյն մէջ Վեսուվ լերան մօտ գտնուող մարդ մը կը պատմէր թէ սոսկալի մանվիւններ և սրոտման ձայներ լսուած էին : Երկիրը կը սասանէր , լերան կողին վրայ վիճ մը կը բացուէր և այս անհետեղ բերնէն՝ տարօրինակ զօրութեամբ մը հրոյ եւ ծխոյ սիւն մը դուրս կը ժայթքէր , որ շըջակայ երկիրները մեծ տարածութեամբ ծածկեց : Բազմութիւ անձինք սպաննուեցան կամ վերաւորեցան եւ հրաբուղին արտասահոսումը՝ շատ օքէր իւր տւերումները շարունակեց :

Ֆրանսիա , Օվէրնէի մէջ , շատ լեռներ կան , որք երբեմն հրացեալ նիւթեր ժայթքած են , բայց այժմ այդ հրաբուխները մարած են :


ՄԱՅ.՝ Երկիւղալի է ուրեմն Երկիրը փարել , քանի որ անոր խորը կրակ կայ :

ԵՐ. ԹԱԳ.՝ Կը կարծուի թէ կարելի է մինչեւ 10 ժարասախ կամ 40 հազար մէտր խորութեամբ փորել , առանց հրոյ պատահելու . բայց երբէք այս չափ խորութեամբ փորուած չէ :

ՄԱՅ.՝ Վերջապէս խիստ երկիւղալ է մոտածել , որ օր մը մարդ կրնայ երկ-

րաշարմէ մ' արթննալ և հրեղէն անձ բեւի մը տակ գտնուիլ :

ՕՐ. ԹԱԳ.՝ Երկար ժամանակէ կ' վեր ֆրանսայի մէջ երկրուշարժ եղած չէ . և կարծեմ թէ այժմ կրնաք համգիստ քննաւալ : Մանաւանդ հարկ է գիտնալ , որ ինչպէս եռացած կաթին երեսի սերը՝ կաթին սրազելով կամաց կամաց կը թանձրանայ , այսպէս ալ կը կարծուի թէ երկիրս հետզհետէ պազելով՝ իւր կեղեւը տակաւ առակաւ կը թանձրանայ :



ՊԵՍ. ՏԵՐ ԱՅ. ԱՌ ՋԱ. ՇԱ.

(Եարունակութիւն և վերջ առ թիւ 31)

Սիվատրէի բերդին առումն . Ռուսաց Պազգան լեռները անցնիլն . Քանի մի դեպքեր , եւ կարեւոր պատրաստութիւններ . Կայսերական գնդին թամիլի ագարակը փոխադրիլն , եւ Տուաֆը վաշային ճամբայ ելլաց . Վիտինի թահվայ աւաննէն լուսադարձ : Վիտինի թահվայ աւաննէն լուսադարձ որոշումն . Քանի մի խոռոչութեանց երկին չիջումն . Հաշտութեան ծողովոյն կազմումն , եւ փոխադարձարար պաշտօնական մորթակաց կնքումն , եւ սուող ինչ պատերազմի պատրաստութիւն :

Անցեալ տարուան Զիգատէ ամսոց սկիզբէն ՚ի վեր Ռուսաց զօրքը Ախիսարը թէի բերդը պաշարէր և վերջին աստիճան կը նեղէր . թէեւ քաղաքին բնակչէքը գտնուած իսլամզօրոց հետմինչ այս իէտք քաջութեամբ եւ արիութեամբ ջանացին պաշտպանել , այլ որովհետեւ բերդին բոլորտիքը գտնըւած պատիկոց , և այլ ամ-

բութիւնները Ռուսք ականահատութեամբ նետած էին . և այնուհետեւ Ընդդիմութիւնը օգուտ չը գործելին զինի , այսպահ մանկանց կանանց և աշխատապարտ կարստեան պատճառ պիտի լինէին . ուստի բնակչաց հաւանութեամբ Զիշիճճէ ամսոյ վերջերը բերդը յանձնեցին : Գաւառին կուսակալ համճի Ահմէտ փաշան , և նիզուկակից նորին սերթ Մահմուտ փաշան Խոլամ զօրաց հետ կազմանօք գերի վարեցան : Ռուսաց յիշեալ բերդին այսպիսի եղանակաւ տիրելուն վերայ 0սմաննեանք տագնապեցան , զի յայտնի կ'երեւէր թէ այնուհետեւ Ռուսաց բանակը Շումնիի և Պալգան լերանց ուրիշ կողմերը պիտի արշաւէ , վան որց փութացին սրբան կարելի էր հարկաւոր պատրաստութիւնները կազմելու , կայսերական բանակին քանի մի երեւելի պաշտօնականներ Խոլամ զօրաց գունդերով Տէրչլ և Քէօղիւ գիւղերուն կողմը խրկեցին Պալգան լերանց կողմերը ամրացնելու :

Ինչպէս որ վերը յիշեցինք , Պալգան լերանց ամրութեան և զգուշութեան համար զօրք և զօրապետք խըրկուեցան . սակայն Ռուսաց զօրքը սոյն ժամանակին Քէօղիւ գիւղին տիրեցին , և Պալգան լերանց այս երեսը անցնելով ուղղակի Մի-սի-րիի վերայ յարձակեցան . զի որովհետեւ այն կողմերը մեծ ջանից և կարեւոր ամրութեանց պէտք ուներ , կայսերական բանակը գտնուած Մէհէմմէտ փաշան Սպարապետի ախտղառալ և զօրաց բազմութեամբ այն կողմերը խրկեցին : Քանի որ Ռուսք այսպիսի գիւղութեամբ Պալգան լեռները անցան , տէր մի արասցէ , երբ նոցա գէմ ելլող և ճանապարհը արգիլօղ մէկը չի գտնուի , այն առեն գործը աւելի գմտար կը լինի , ուստի պէտք եղած պատրաստութիւն-

ները տեսնուեցան . և ըստ պահանջման հարկին նուիրական դրոշը պատերազմի գաշտը տանելու համար , Արևելեան կողմանց մօտ աեղերը գըտնուած զէնք կրելու կարող բոլոր իւլամբ բարձրագոյն հրամանաւ մոյրաքաղաքը հրաւիրեցան :

Ցառաջագոյն գրեցինք թէ՝ Պալգան լերանց կողմերը բաւականի չափ զօրք եւ զօրապետք խրկուեցան , եւ Այսուսի կողմերը Ռուսաց գունդերուն պատահելով սաստիկ ճակատամարտ մի մղեցին , սակայն ըստ անյանդ բերման բախտին Խոլամ զօրաց զօրութիւնը բեկաւ և լքաւ և ամեներին ՚ի փախուստ աճապարեցին , եւ այս պատճառաւ այն կողմի կայսերական ամբողջ բանակը խրտակելով ցիւրուցան փախստական գնացին , և մեծամեծ պաշտօնավարք եանուոի անկան Ռուսաց այս անդամի թշնամական արշաւանքը վերջին աստիճան սաստիկ , եւ գիւմագրաւ լինելն կարի գժուար և ակն յայտնի կ'երեւի ամեն հնարքներէն և ջանքերէն արտաքոյ լինելն , և միշտ զինագագարը և հաշուութիւնը պատերազմէն նախադասէ , և ամեն կերպով լաւագոյն կ'երեւի մեզ որ և իցէ եղանակաւ հաշտութեան միջաները ձեռք առնել , և ասոր նման կարեւոր խօսքեր յառաջադոյն մեծ սպարապետի կողմէն ալ ծանուցուած էր . Վանն որոյ սոյն խնդրոյն վերայ խորհելու մեծի գէնակէտին ապարանքը ընդհանուր աւագաժողով գումարեցաւ , եւ խնդիրը վիճաբանութեան դրուեցաւ : Վերը գրուածին համեմատ , կայսերական պատերազմին հըրատարակումն անարժան առաջարկութենէ եւ անպատշաճ պահանջմաններէ յառաջ եկած է . և ասոր վերայ մեր կարողութեան համեմատ կարգագրութիւնք եւ պատրաստութիւն-

թիւնք զը պակսեցան . այլ ըստ պատմահման բախտի և ճախտագրի և ոչ մի դրս յաջողութեամբ յառաջ գնաց . և որքան բերդեր և ամրոցներ թշնամեաց ձեռքը մատնուելու , և զանազան տօսիճաններէ որչոփի իսլամք իրավանօք գերի վարելց պատճառ եղաւ , և այսուհետեւ սորա երեւոյթը կարի տարօրինակ կ'երեւի , և լաւագոյն է այս բախտին թեթեւ արբեցութենէ վերահասած ցաւը եւ տրտմաւթիւնը , Տնօրէնութեան եւ հաշոռութեան բաժակներով վարատելու կարգադրութիւնը , և վրէ ժխընդրութեան լի բաժակին ըմպումը ուրիշ ժամանակի թողուլ , և այս կերպով ամենեքեան որոշեցին հաշոռութեան ճարրը գտնելու ջանքեր ընել : Սակայն թշնամւոյն իրենց տկարութիւնը յայտնել կարի անպատշաճ կը թուէր , ուստի կարեւոր դատեցին պէտք եղած պատրաստութիւնները կազմել , և անմիջապէս արժան դատեցին կայսերական թիւնապահ զօրաց հուհիքը Օսման փաշային հետ քանի մի Վաշտ Մանսուրէ կոչեցեալ զօրք , և Մայրաքաղաքին բոլոր գիտնականաց մեծամեծաց և պաշտօնէից հովանաւորութեանց տակ գտնուածներէն՝ ըստ պատշաճի հետեւակ և այրուձին նոցաընկերութան վաւթանակի բանակ մի կազմել . Եւ սրոշեցին Զերմէն գաւառուին կառավարիշ Ապարահիմ փաշան , որ իւր պատշօնական գործերուն վերահասութիւն չէր կրնար գործել . նոյն նահանգն , Պալգան լերանց այս երեսը , և Անդրիանուպօլսոյ շրջականերն Ալիշ փաշային տալ Ապարահիմութեան պատռանաւունով . և ամենեցուն պէտքերը ամբողջոպէս հոգացուելով կատարաւեցաւ :

Ասկէ յառաջ կայսրը նուիրական գրոշալիքնակնի և նորա շրջակաները գնաւ

ցած էր , այլ ժամանակին դէպքերը ՚ի նկատի ունելով , այնուհետեւ անյարմար էր այն կողմերը մնալ , ու սար Աէֆէր ամսոյ 9ին , կայսերական գնեգով մէծ փառոք նոյն տեղէն Բամբի ագարակը վոխադրեցաւ : Եւ կայսերական թիւնապահ զօրաց հուհիքը Օսման փաշայի հետ գնալիք օրոշեալ կայսերական բանակը կազմուած գողով , նոյն ամաց 10ին Տավուտ փաշայի գաշտէն պատերազմի գաշտը մեկնեցաւ :

Ուռաւաց զօրքը յառաջագոյն Վիտինի կողմերէն ալ Թունայի գետը անցնելով՝ այն կողմերը եկած էւ Բահվայ աւանին տիրած էր , և նոյն տեղոյն աղատութիւնը յառաջագոյն Նընդրացի Մուստաֆայ փաշային յանձնուած էր , փաշան Վիտին հասնելով՝ այն կողմերը քանի մի վաշտ զօրք խրկած էր , և այս պատճառաւ այն տեղ եղած Ռուսաց զօրքը չի կրնալով դէմ կենալ , Թունայ գետին միւս երեսը անցան , եւ նոյն աւանը վերստին ետ առին :

Որոյինեակ Ռուսը Պալգան լերանց այս երեսը անցած էին , Օսմանեանք յակամացից բռնադասեալ հաշտութիւնուելու որոշում տուին , այլ մինչդեռ կը գտնելու կայսերական բանակէն պատգամաւորներ խրկել , Ռուսը յառաջ քալեցին և քանի մի քաղաքաց առանց պատերազմի դիւրութիւն տիրեցին , որք են Եանապօլի , Խոլիմիա , Գրքդքիլիայ , Ալինէ ատա , և ՚ի վերջու երկրորդ արքայանիստ Անդրիանուպօլիս (Երինէ) մայրաքաղաքը : Այս արշաւանաց երեւոյթը , Տէր մի արասցէ , ուղղակի Կ . Պօլիս էր , որքան որ կայսերական բանակին փախանորդ Թահիր էֆէնտին հաշտութեան պատգամաւոր սրոշուած էր , սակայն գործը օր յառաջ լրացնելու համար , անմիջապէս առաջին մասին տումարակալ Աէնէմմէտ սատըդ էֆէնտին , առաջին

երեսիտիան , և Անտառօլիքի աստիճանաւու կ . Պօլսոյ նախկին գասաւոր Ապատիւլ Գատոր Պէյ , Երկրորդ երեսիտիան , կայսերական ատենին դպրապետ Ա. բիթ էֆէնտի , եւ տիվանի թարգման Էսրար էֆէնտի , սոցա ընկերանալով Անդրիանուազօլիս ուղեւորեցան :

Այս ժամանակներս սինվերոր եւ կարձամիտ մարդիկներէն ոմանք վերոգրեալ խնդիրն պատեհ առիթ համարելով՝ յանդգնեցան առաջին խռովութիւնները և անկարգութիւնները վերըստին արթնցնել , և սկսան ստացող բանիւք անվայել և անարժան խօսքեր խօսիլ նոր օրինաց և կարգուց վերայ , մանաւանդ տառիլիք հանուրութիւն Մէկնմէտիյն կոչեցեալ գունդին , զոր խաղաղասէր Սուլթան Մահմուտ ազգայն բազում գժուարութեանց յաղթելով հազիւ յաջողէր էր գրել և կազմել , եւ ասոնց շատերը խոփանեալ օճառին պաշտպաններէն էին , մանաւանդ նոյն օճառին նախկին պաշտօնեայ ներէն չարագրդիու մարդիկներ միջամտելով , Աստուած հեռի արասցէ , Անդրիանուազօլոյ գէպէն վէրջը՝ գըժուարին բաներ յարուցանել կերեւակայէին , մինչ զի Սեաւ ծովու նեղուցին վէրատեսուչ գաբուճի պաշ (սենեկապետ արքայի) Համիտ աղային յանդգնութեամբ բրած անհաւատարմութիւնները մի ըստ միունք Ա. բայ յանդուած անմիջապէս գլխատել տուաւ . նոյնպէս ուրիշ այսպիսի խռովարոր և նենդամիտ մարդիկներ զինի քննութեան տանջանքներու մատնեցան : Արհեստուորաց գլխաւորներէն ոմանք , որոց անհարդ և անպատեհ գործքերը արդէն իմացուած գոլով , յաւիտենական աքսորի դատապարտեցան : Ինչպէս այս տնկարգութիւնները կ . Պօլսոյ մէջ ծայր տուած էր , նմանապէս

Անսպոլի և Ռումելի քանի մի տեղերը սկսած էին խլրտիլ , մանաւանդ Ա. յատինի կողմերը վէյշէտ կոչեցեալ տւազակաց գլխաւոր Տէլ Մէկնմէտին նման քանի քանի խռովարաներ յայտնուած էին , այլ փառք բարերարին՝ Տէրութեան պաշտօնէից ձեռօք խռովութեան եւ անկարգութեան հուրը , տանջանաց անյագ սրոյն արեան հեղեղներով մարեցաւ :

Խնդիրուսյառաջադոյն գրեցինք , ամենեցուն բաղձալի հաշտութեան ժողովը կազմելու համար , այս կողմէն երեսիտիաններ խրկուած էին , եւ յԱնդրիանուազօլիս ներկայ խնդրոյն վերայ սկսան խօսիլ : Ուուսաց տիրած տեղերը՝ վերաստին Օսմաննեանց թողուլ , բաց ՚ի Անարայի՝ չերքեզաց՝ Ախցիսայի , Անլըրիլէի բերգերէն , որոնք Ուուսաց կողմը պիտի մնան : Ա. բ. բիրմանի գաշնաղրութեան մուրհակին մէջ գըրուած ծանուցեալ խնդիրները կատարեալ պիտի գործադրուին : Լոնտրայի գաշնաղրութեան համեմատ՝ սպատերազմակելու միմիայն առիթ տուող Մօռայի ազատութեան խնդիրը անմերի պիտի կատարուի : Խպրայիլ , Եէր կէօ (որ է մայր բերդորէից և տակաւին թշնամոյ ձեռք չի մատնըւած) բերգերը , որպէս թէ Ուուսաց կողմէն քանդուած լինելով , նոյն ամբութեանց բոլորովին ջնջուելու թոյլտութիւն : Այսուհետեւ Թունայ գետին միւս երեսը Խպամ ժողովուրդ չի բնակին երբէք : Մօլտովալաբիոյ բընակչոյ ազատութիւնը կատարելապէս յարգուի : Վաճառականութեան վընասուց փոխարինութիւն 96 հազար քսակ մէկ ու կէս տարուան մէջ որոշ շեալ բաժիններով հատուցանել . Ուուսաց նաւերը Սեաւ ծովուն մէջ ամենոյն համարձակութեամբ շըլիլ : Խսի սպատերազմի ծախուց վախարինութիւն

700 Հաղար քսակ դրամ պահանջեցին ,
այլ այս գումարը խիստ չափազանց լի-
նելով՝ վար իջնալը Ռուսաց կայսեր
գթութեան թողուցին , Որքան որ վար
իջնայ , մինչեւ որոշեալ պայմանաժա-
մուն ամբողջապէս հատուցանելու , Այ-
լադրէ քաղաքը , Եֆլաք և Պուղտան
երկիրները իրենեւ գրաւ Ռուսաց ձեռ-
քը մնալու պայմանաւ , Վերոգրեալ
վաճառականութեան վնասուց փոխա-
րինութեանց բաժինները քանի որ վը-
ճարուին Օսմաննեան Պետութեան եր-
կիրները կարգաւ մէկ ու կէս տարուան
մէջ թողուին , և այս եղանակաւ հիմ
նական հաշտութեան որոշում տուին ,
և Բէպիլէ Էլ 15ին երկու կողմի երես-
փոխանք ՚ի պաշտօնէ փոխադարձ մուր-
հակներ կնքեցին , և երկու կողմէն ալ
գնադադար եղաւ :

Որովհետեւ Ռուսաց այս ծանր ա-
ռաջարկութիւնները ընդունիլ անկա-
րելի , եւ այսպիսի դժուարակիր բե-
ռանց ներքեւ մօնալ և Ճնշուիլն ան-
հնարին էր , այլ ըստ հարկին եւ ժա-
մանակին դէսկրերը ՚ի նկատի ունե-
լով , ակամայ կամօք պարտաւորեցանք
ընդունիլ , զի Ռուսք Անդրիանուազօլ
մէն փութով չը պիտի մեկնէին , և այս
պարագայիս քանի քանի չար դիտաւո-
րութիւններ ունէին իրենց սրտին մէջ ,
որոյ վերջին վախճանը անպատճառ
խուլութեան պիտի հասնէր , ուստի
կարեւոր դատուեցաւ պարտուագատ-
շաճ պատրաստութիւնը և դգուշու-
թիւնը ձեռքէ չը թողոււլ . Աղէքսանդ-
րիոյ կառավարիչ Մուստաֆա փաշան
՚ի մասին Անդրիանուազօլսոյ դիպուա-
ծոց , պաշտօնին փոխօսութեամբ բա-
ւական զօրքով Ֆիլիպէ եկած էր , նո-
րա այն կողմերը պատրաստ կենալու ,
և Մուսայի խնդրոյն գործադրութեան
պատճառաւ . Բութէլի կուսակալին այս
կալմերը գալու . և Յլիշ փաշային մի-

բանակով Ակլիստրէ նատելն յարմար
գատուելով , հրաման եղաւ , և նոցա
պէտքերը հոգացուեցան . Իսկ Ռու-
սաց հարկապահանջութեան խնդիրը
թեթեւյնելու համար , Մանուրէ զօ-
րաց Սպարապետի փոխանորդ Խալիլ
Ռիֆաթ փոշան յատուկ դէսպան , և
Պալդան լիրանց նախկին տումարա-
կալ Նէճիսկ էֆէնտին Նշանձութէան առ-
տիճանաւ ներքին խորհրդակոն որոշե-
ցան , եւ կայսերական ֆրգաթմնով
մինչ ՚ի Հոճայ պէյ և անտի ցամաքէն
Բեդրաբուրդ երթալու ձամբայ ելան .
Երկուքն ալ յիշեալ տեղը հասնելով ,
պահանջուած տուրքէն բան մի ջը կո-
րչացան վար իջնալ , միայն պատե-
րազմի ծախքէն , այս կողմը Մոռայի
խնդիրը ընդունուելուն համար մէկ
միլին մաճար ոսկի վար իջնալէն զատ ,
նոքա եւս այն տեղ երկու միլին վար
իջնացուցած են . իսկ մնացեալ գումա-
րը մինչեւ վեց տարուան մէջ հատու-
ցանելու համար , Եֆլագ և Պուղտան
երկիրները Ռուսաց գորքերէն ազատ
պիտի լինին , և միայն Ակլիստրէ քա-
ղաքը իբրեւ գրաւ իրենց ձեռքը մնա-
լու պայմանաւ որոշում տուած են .
Սցն ժամանակին ծովային գործոց պաշ-
տօնեայ Ահմէտ փաշան մեռած էր , նո-
րա պաշտօնը յիշեալ Խալիլ Ռիֆաթ
փաշային տրուեցաւ :

Ասպուածագուր Եպիսկոպոս

Տ . Յովհաննէսէան :

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին : 1876 Յուլիս 20 .

(Կարունակութիւն , առ թիւ 3 :)

Առաւօտ ժամ Ամին հասանք իյնէ պօչ
կոշեցեալ փոքրիկ աւանը ծովեզերքը շե-
նուած , այլ շատ տուներ լեռներուն փայ
անտառաց և պարտէ զներուն մէջ ցրիւ
կը տեսնուին . նաւահանգիստ չունի ,